


ՀՀ. 71  
Լ-50

Վ 10-32

Հայաստանի Ազգային-Տարագի

№ 68

# ԳԵՂԱՓՆՁԻԿԻ



ՄԵՂԱՆՉԵԿ ԵՄ

Աղբերի 1909 թ. № 3-ի յաւելւած

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Տ Ո Ւ Ր Բ Է Կ Վ Յ Ա Պ Վ Ս է Փ Ե Ա Ն Ի

Լոյս տեսած աշխատովթինները.

1. Ռիմու. (Ա. Բէլու-Բէկեան) Փարիզ, 1901 թ.  
սպառւած:
2. Հայրենասիրովթինը իբրև յանցազրծութին (ա. Բէլու-Բէկեան) Փարիզ, 1903 թ.  
սպառւած
3. Միաւ վախ շոնկիմ (Գիւլիստանցի), Թիֆ-  
լիս, 1905 թ. գինն է 15 դ.

Հեղինակի անտիպ աշխատովթինները.

4. Երես մը իմ յիշատակարանէ:
5. Բարի ձանապարհ...
6. Արդար դատաստան:
7. Հայկական շարժում:

Նրա թարգմանական աշխատովթինները, որոնք պէտք  
է լոյս տեսնեն առանձին գրքոյներով.

8. Եղբօր տեղ (տիկ. Ե. Պոլիտկովսկայա-Միխայ-  
լովայի):
9. Զարեաց արմատը (նոյն գրագիտուհու):
10. Այր Աստուծոյ Միշան (նոյնի):

Հեղինակի հասցէն. Զակալալ. Աստվածաւ Բեկ-  
Օվսեպյան, կամ Zakataly, Russie-Caucase. Astvatzatour Bék-  
Hovsepian.

891-71  
L-90

Այ




ԿԱՐԻԴԻԸ ԷՌԻՎԵՇԵԽԻՉ

# ՄԵՂԱՆՉԵԼ ԵՄ

(Պատմաճք կեանքից)

1002  
6939

ԹԱՐԳՄԱՆԵՑ  
ԱԱՏ. ԲԷԿ-ՑՈՎԱՆՔԵԱՆ



ԹԻՖԼԻՍ  
Տպարան „Պրօցրէս“ Բնկ., Վէլեմին., № 7.

1909

21.11.2013

11591



मानप्रतीक

## ՄԵՂԱՆ ԶԵԼ ԵՄ

(Պատմմածք կեսանքից)



Ուղիանա տատը երկար  
փնտրում էր իր ծերունուն և  
վերջապէս գտաւ... այսպէս ա-  
սած՝ բռնեց նրան ուղղակի  
յանցանքի վայրում. նա նըս-  
տոծ էր Շիլ-Իգնաշկայի հետ  
միասին բաղնիքի ետևը՝ փոք-  
րիկ գետակի ափին: Եւ ծե-  
րունին, և երեխան կռացրած  
իրանց զլուխները մի հին, աղ-  
տոտած լրագրի վրայ,՝ ոչինչ  
չէին նշմարում իրանց շուրջը:  
Տղան տառերի անուններն էր  
տալիս, ծերունեն նրա ետևից  
կրկնում էր: «Մ-ե-ն-ը...մ-ե-  
ն-ը...»—ջանքով երկարացնում էր ծերունին:  
—Ոչ թէ «մենք», պապի... այլ «մ...մ...մ»—ու-  
սում էր լրջօրէն երեխան:—Ահա և այս «մ»... իսկ եթէ  
«մենք» էլ աւելացնենք, այն ժամանակ կը լինի «մենք»:  
Հասկացար:

«Մենքը, մենքը», —կրկնում էր ծերունին և սրբում թեքով իր ճակատից հոսող քրտինքը:

Ուլիանա տատը մօտեցաւ կամացուկ, գաղտագողի... ծերունին և երեխան այնպէս էին զրադւած գործով, որ մինչև անդամ չընկատեցին նրան:

Ուլիանան սաստիկ բարկացաւ: Նա այնպէս բղաւեց, որ մինչև անդամ հարևաններն էլ լսեցին:

—Այդպէս էլ գիտէի... Հը, այդպէս էլ գիտէի... ինչպէս առաջ տիսմար էր, այնպէս էլ տիսմար մնաց այս ալորբը: Ես սրան եմ փնտրում, ևս սրան եմ կանչում... իսկ սա, տես, էլի լրագիր է կարգում...

Հէնց առաջին ահեղ ձայները լսելուն պէս շիլ տղան տեղից վեր թռաւ ու ծլկեց:

—Ուշուու դու, անխիզճ մարդ: Ոչ կնոջդ ես խղճում, ոչ թռութիւներիդ: Երանի աչքերը քեզ չըտեսնեն: Երանի գերեզմանումը պառկած լինէի... Մարդ ամաչում է ուրիշներին, Աստծոյ աշխարհին նայելիս, —պոռում էր Ուլիանան՝ կրթից խելքը կորցրած:

Ծերունու խելացի, բարեհոգի աչքերը նայում էին վախեցած ու շփոթւած: Ճերմակ մազերը բիզ-բիզ էին կանգնել զլիարկի տակից. նա սրբում էր երեսի քըրտինքը: Ծերունին վեր կացաւ, փոշուած հագուստին կպել էին խոտեր ու դարման:

Պառաւը աւելի ևս բարկացած մի զլուխ պոռում էր:

Ծերունին ծածանելով լրագիրը, աշխատում էր համոզել պառաւին:

—Դէ, պառաւ... Լսիր, ինչ եմ ասում քեզ... դէ, պառաւ... Ի՞նչ է որ... Լսիր:

—Ես ոչինչ լսել չեմ կամենում: Ես ոչինչ իմանալ չեմ կամենում, —պոռում էր պառաւը... —Ի՞նչ գործ ունիս, որ այբբենարանի ետեից ես ընկել: Ծերու-

թեանդ ատրիներին խայտառակւում եմ... Մի ուրիշ խելացի մարդ քո տեղ սոկոն ժողովելու կրգնար և ձուկ կըբռնէր, և ցանկապատը կըշակէր... Զուր պէտք է կրել, փայտ բերել...

—Հէնց այդ է, որ ասում եմ... Մի լոիր ինձ... —ինդրում էր ծերունին:

—Ոչինչ լսել չեմ կամենում... Մեր կարտօֆիլը դեռ չի փորւած... Կովի փարախը քանդւել է... Իսկ այդ բոլորը սրա համար ոչինչ... Սա մտքումը դրել է կարգալ սովորել ժողովուրդը վրան ինդացնել: Մինչեւ անդամ մանուկներն էլ են վրան ծիծաղում: Ամօթք քեզ: Միթէ ծերերը կընստեն այբբենարանները ձեռքներին: Աշխը չի որ ծերունին չի կարող սովորել: Դու չես էլ կարող հասկանալ լրագիրը... Եւ յիշողութիւն էլ չունես:

—Ոչ, կարող եմ հասկանալ... Եւ յիշողութիւն էլ ունեմ: Իդնաշան մինչև անդամ զարմանում է... բողոքեց ծերունին:

—Դա միայն ծաղը է, —պատասխանեց պառաւը: —Մարդիկ գարդ ունեն, պատերազմ է, իսկ սրա համար բոլորը ոչինչ...

—Հէնց այդ է, որ ես պատերազմի մասին եմ ուզում իմանալ: Իմ սիրու չի համբերում, կամենում է ամեն բան իմանալ Անդրիւշայի մասին...: Ես էլ եմ տանջւում, չը... Զգում եմ այդ, բաց ովկ կըկարդայ, —մի անդամից ասաց ծերունին:

Պառաւի սիրուը ահ ընկաւ:

—Դու կարծում ես, թէ հեշտ է քո կշտամբանքը լսել... Բայց սիրոս չի համբերում, ամեն բան ուզում է իմանալ... Ինքդ մտածիր, որքան այնտեղ ցաւեր կան... Եւ այնտեղ նորանոր բաներ են կատարւում... Իսկ մենք այստեղ խաւարի մէջ ենք: Ահա լրագիրներն են,

որ ճշմարիտն են գրում Անդրէյի ու Դիմիտրիի մասսն... ծանկանում եմ կարդալ իմանալ:


Պառաւը կրկին կատաղեց և պոռաց՝ ինքն իրան կորցրած.

—Լրագիրները, լրագիրները... ինչի՞ն են պէտք լրագիրները, երբ տանը գործը մնում է: Հրէն փայտ չունենք: Մանկիկները քաղցած են: Նրանք են ահա քո լրագիրները:

Ուիանա աատը խլեց ծերունու ձեռքից լրագիրը և կտոր-կտոր արեց:

—Ահա քեզ կնիկ,—ասաց ծերունին, երերեց գըլուխը, թափ տւեց մատը և ուղղեց քայլերը դէպի խրճիթը: Ետեից գնում էր պառաւը և բարձրածայն անէծք թափում:

—Անզործ քեօփակ: Նրա համար բոլորը ոչինչ... Մեր խրճիթն է փլել, ամբողջ փարախը ծածկւած է, այն ինչ նա ծերութեան հասակում մտածում է կարգալ սովորել: Ամծթ քեզ: Ամբողջ գիւղը վրան խընդում է...



Բ.

հազանի նահանգում Զ: գիւղը թաղւած է կուսական անտառների ու ձահճաների մէջ: Գիւղը աղքատ էր. ընդգամենը 20 տուն ապաստան էին գըտել փոքրիկ գետակի ավին, որ ամառը բոլորովին ցամաքում է, և զետանցքով ման են գալիս հաւերը:

Գիւղից 30 վերստ հեռաւորութեան վրայ գտնւում էր փոքրիկ գաւառական քաղաքը, իսկ նրա հանել հինգ վերստի վրայ՝ երկաթուղու կայարանը:

Գիւղացիք, չընայած գաւառական քաղաքին ու կայարանին, աղքատութեան մէջ տառապում էին: Հողը շատ վատ էր: Գործ գտնել շատ դժւար էր, որով-

հետեւ շատ քիչ տարածութեամբ ագարակներ կային:

Կիրակի օրերը գիւղացիք տանում էին իրանց խղճուկ արտադրութիւնը գաւառական քաղաքի շուկան: Աշնանը տանում էին այնտեղ սունկ, մոշ ու լուսամիրք:

Այն տարին, որի մասին է խօսքս, առանձին ծանրը տարի էր: Պատերազմ կար, և գիւղերից շատ ժողովուրդ էր գնացել պատերազմ: Տարել էին մինչև անգամ միակ աշխատաւորներին, և ցաւը շատ մեծ էր: Ճիշն ու աղաղակը, լացն ու մխկտանքը տիրում էին բոլոր գիւղերում:

Գիւղում առաւել դժւար էին ապրում ծերունի Անտիպովները, — Գաւրին ու Ուլիանան: Նրանց թէ որդուն և թէ փեսային տարել էին պատերազմ, և նըրանք մնացել էին ցաւի մէջ հինգ մասնկիկների ու հարսի հետ: Նրանց փեսան այրիացած էր:

Ուլիանա տատը պատրաստ էր, ըստ երեսյթին, մի կուշտ լալ: Բայց յետոյ մտածեց, զսպեց իրան և գործի կպաւ:

Նա մի նիհար, վտիտ, ժիր պառաւ էր: Գիւղում ասում էին, որ նա կուլ կըտայ միանգամից իւրայիններին:

Արդարի, Ուլիանա տատը միշտ հերսոտում էր և գոռում տնեցոց վրայ: Գիւղացոց հետ յաճախ նա կուռում էր: Այսպէս էր նրա բնաւորութիւնը: Ծերունի Գաւրիլը՝ նրա ամուսինը՝ խաղաղ մարդ էր, լուակեց: Գիւղացիք ասում էին, որ նա վախենում է իր պառաւից, ինչպէս կրակից: Ամենքը գիտէին, որ եր պառաւը սկսում էր նրա վրայ բղաւել, նա միայն ասում էր. «Ենա՛ եւ կլիլի», միշտ կամենում էր, պատասխանել, սակայն պառաւը թոյլ չէր տալիս: Նա ձեռքը շարժում էր ու գնում, յուզւած ու տիսուր:

Յամենայն դէպս, արդարութիւնը պիտի տալ Ուլիանային. Նա տնարար և գործունեայ կին էր: Միայն նրա շնորհիւ տան մէջ չէր զգացւում չքաւորութիւն: Նա հնարը գտաւ մի կերպ, և կով պահեց, և երեխաներին կազմուրեց, գիտէր օգուտով վաճառել իր աշխատանքը, և քաղաքում նպաստ գուրս բերել տալ իրանց համար, սոյլոն հաւաքել և աղում գնել: Ամբողջ ընտանիքը նա էր պահում:

Հարսն ու թոռնիկները վախենում էին տատից՝ ինչպէս կրակից, և շատ սիրում էին պապին:

Գաւրիլը էր կնոջ կատարեալ հակապատկերն էր: Հեղարարոյ, լուսկեաց, անհամեմատ քաղցր՝ նա մի փոքր էլ խուլ էր:

Իր հինգ թոռնիկներին խելազարութեան չափ սիրում էր, զրկումն էր պահում նրանց, պատմում էր հեքիաթներ, որ գիտէր անթիւ: Նրանց անւանում էր որրիկներ այն ժամանակից ՚ի վեր, երբ նրանց հայրերը գնացին պատերազմ:

Եւ ամբողջ գիւղի տղաները սիրում էին Գաւրիլին: Նա նրանց հետ գնում էր իր մեծ խելքը, ինչպէս ասում էր նրա մասին Ուլիանա տատը: Արդարե, ծերունուն միշտ կարելի էր գտնել մի որեէ տեղ մանուկների հետ, կամ նրանց հետ սունկի էր գնում, կամ ծուկ բռնում, կամ կարթիկ սարքում, իսկ աւելի յաճախ բարձրանալով մի բլրի վրայ՝ երգեր էր երգում և հեքիաթներ պատմում: Եթէ պատահէր, որ հացահատիկ ծեծելու շինութեան, կամ բանջարանոցում ճիւղաւէտ կեռասի տակ, կամ հին բաղանիքում բռնում էր Ուլիանա տատը իր ծերունուն տղայոց հետ՝ սկըսում էր պոռալ վրան:


— Ելի դու տղոց հետ ես ընկել խոշոր խելքովգ...

կամ թէ ուրիշ գործ չունեմ, քեօփակ դատարկասունու  
Մարդկանցից չես էլ ամաչում, պատկառում:

Երեխանները, լսելով ծանօթ անեղ ձայնը, փախ-  
չում էին ու դէն՝ ինչպէս մկնիկներ. ամենքից ա-  
րագ փախչում էին հարազատ թռոնիկները՝ Պարսկան  
Վանիկան, Դաշուտիկան, Պլունկան ու Կոլկան: Սրանք  
թագնւում էին տատի աչքերից երկար ժամանակ:

—Կին է էլի, —ասում էր ծերունին և գլուխը թա-  
փահարում:

—Չուր կըիր, անտառը փայտի գնա, —խստու-  
թեամբ հրամայում էր պառաւը, և ծերունին խոնար-  
հութեամբ գնում էր կատարելու նրա հրամանները:



Գ.

Օ երունի Գաւրիլը մի  
թոյլ կողմ ունէր, որ գի-  
տէին ամենքը, և համազիւ-  
ղացիք միշտ նրա վրայ ծիծա-  
ղում էին: Նա չէր  
կարող սառնասըր-  
տութեամբ տեսնել  
գրքոյկ կամ լըա-  
զիր... Հէսց որ մէ-  
կի մօտ տեսնում էր  
լըազիր կամ գիրք,  
— Գաւրիլ պապին

արդէն տեղն ու տեղը թուլա-  
նում էր և խնդրում:

—Կարդայիք... Ճշմարիտ...  
Կարդա, իսպրեմ, ինչ է այդ-  
տեղ գրւած... Եղիր, բարերար,  
Կարդա:

Եթէ զիւղում ձեռք ըերէին  
տպւած թերթի կտոր և ըս-  
կսէին կարդալ, Գաւրիլ պապին  
ամենից առաջ կընկնէր: Երբեմն նրա վրայ բար-  
կանում էին. պոռում էին. «Դու ինչո՞ւ ես, ալեոր, ա-  
ռաջ ընկնում... Դու ինչ ու ես հրում սրան-նրան»:

— Շատ կըցանկանայի լսել: Շատ հետաքրքիր էր,  
Ճշմարիտ... Մի զայրանաք, սիրելիք: Ես չեմ հրում.

լոյս աշխարհում ամենքի համար էլ տեղ կըդանւի...  
Եւ ծերունին ձեռքերը դնելով ականջներին՝ ագահութեամբ լսում էր ընթերցումը:

Նա սիրում էր նոյնպէս զատողութիւն տալ ամեն բանի մասին, և այնպէս տեղին, բնորոշ էին նկատողութիւնները, նրա խօսալցութիւնը, համեմած առակներով ու գւարճախօսութիւններով:

Եւ շատախօս էր Գաւրիլ պապին: — «Դու նրան հացով մի կերակրիր, այլ կարգա կամ խօսիր նրա հետ» — ասում էին համագուղացիք:

Այդ մոլութիւնը դէռի ընթերցանութիւնը կամ գիրքը առաւել ևս բռնկւեց նրա մէջ, երբ սկսեց պատերազմը: Այնաեղ, որիէ հնուռ տեղ, կատարւում էր զարհուրելի գործ, տեղի էին ունենում ճտկատամարտներ, թափում էր արիւնակիցների արիւնը: Որպէսզի լրագրից տեղեկութիւններ առնի՞ ծերունին մինչեւ անգամ զնում էր ուրիշ գիւղեր՝ հինգ, վեց վերստ հեռաւորութեան վրայ գտնուզ: Եւ որտեղ որ կարգում էին, դուրս էր պրծում առաջ և իրեն մեղաւոր ասում.

— Ներեցէք, սիրելի, մի քիչ խուլ եմ... Գուցէ Անդրիշայի ու Միտայի մասին եմ լսում.

Գատերազմի հետ միասին պատում էին նոյնպէս յուղիչ զրոյցներ, առէ-կոսէներ, աւելի հետաքրքրական: Խօսեցին ինչ-որ գործադրութիւն մասին, յուղումների, ներքին թշնամու, բանուրների մասին: Ծերունի Գաւրիլի խելքը զիսին չէր, նա այս ու այն կողմն էր ընկնում՝ որպէս պակասամիտ, փնտրում, հարց ու փորձ անում, ով ինչ կաէ, ով նրան մի նոր բան կըկարգայ:

Ուրիշնա տատի, ասում էին, իրը թէ կոկորդը ցաւում է, այնքան է նա բղաւել իր ծերունու վրայ:

— Եւ ինչ տիմարն է սու: Բացի գրքից՝ ոչինչ չի ուզում իմանալ, ծէր Աստաւծ: Անուղղելի ծերունի է:

Եւ ուր գարձեալ կոբաւ... երկի, ելի մի որեէ տեղ կարգում են... — Պառաւը արգարի միշտ գտնում էր ծերունուն ընթերցողների մօտ:

Բայց երբ Զավոլոխովիիէ զիւղը եկաւ մի բանւոր իգնատիյ սնունով, ֆաւրիլ պապին նրանից չէր ուսում և կաչում էր նրանից առաւօտից մինչև զիշեր:

— Ոչ, մի պատմիր գու ինձ, աղաւնեակդ իմ, ինչ է կատարւում այնտեղ: Ե՞րբ կըկերջանայ պատերազմը: Ի՞նչ կըլինի: Հող կըտան մեղու:

Գիւղում կեանքը ուրիշ տեսակ էր ընթանում այժմը. փոխանակ գիւղական երեկոյթներ սարքելու, խաղալու, խմբական երգեր երգելու, — երիտասարդներն ու աղջկերքը հաւաքւում էին միասին, ասում, խօսում, գատում ու վիճում ինչ-որ նոր շաների մասին՝ չըլըսւած ու անհասկանալի:

Ամենից շատ ասում, խօսում, գատում ու պոռում էր իգնատին: Նա ամեն բան զիտէր, ամեն բան կարող էր բացատրել: Նա մինչեւ անգամ որտեղից որ է ճարում էր լրադիրներ ու կարգում բոլոր նորութիւնները: Ծերունի Գաւրիլը միշտ զուով մօտենում էր նրան և աղանութեամբ ականջ զնում՝ չընհոացնելով նրանից իր աշքերը և երկիւղ կըկելով կորցնել թէկուզ մի խօսք:

Մի անգամ իգնատին կատակով ասաց ծերունի Գաւրիլին:

— Եւ կըլինէր, որ զու ինքդ սովորէիր կարգալ... թէ չէ հանգստութիւն չաւնեմ քեզանից: Խուլ էլ ես զու, ուրիշներին էլ խանգարում ես... Իսկ որ սովորես՝ ոչոքի չես խնդրիլ... Կարգա քեզ համար օր ու զիշերը...

Եւ իգնատին բարձրածայն հրհոաց: Փոխանակ ծաղը ու ծանակի ծերունուս վրայ:

վերցնէիր ու սովորեցնէիր,—լրջօրէն պատասխանեց Գաւրիլը:

—Շատ գեղեցիկ: Բանը որ այդտեղ հասաւ՝ կըսովորեցնեմք,—կատակով ասաց Իգնատին:—Նստիր, պապի-ջան, և լսիր... Եթէ ասածս չըկատարես, այն ժամանակ սիսեռի վրայ կըչոքացնեմ:

Պատանիներն ու աղջկերքը, որոնք իրձիթումն էին, ուրախ-ուրախ ծիծաղեցին: Իսկ Իգնատին նստեցնելով Գաւրիլին նստարանի վրայ՝ տւեց նրա ձեռքը լրագիր և, ցոյց տալով տառերը, ասաց.


—Դէն, սովորիր, սովորիր լաւ, ծերունի Գաւրիլ:

Սա «ա» տառն է, սա «բ», սա «զ», սա «դ» սա «ե»...

Ի հարկ է, դա մի կատակ՝ էր: Բայց և այնպէս այդ օրւանից, ինչպէս ասում էին զիւղացիք, Իգնատին կասես հմայեց Գաւրիլին: Ծերունին միշտ հետը տանում էր լրագիրը և հարցնում սրան-նրան. «Բա սա Բնչ տառ է: Իսկ սա: Իսկ սա:»—Իսկ խօսք կազմելը: Երբեմն նա մինչև անգամ կպչում էր զիւղի կարգացող երեխաներին: Պատահում էր, որ ծերունուն ծաղը էին առնում, կշտամբում, ամաշեցնում... Իսկ նա կասես ուխտած՝ անվախ կերպով առաջ էր գնում իր նպատակին հասնելու համար:

Ծուտով ծերունի Գաւրիլը գտաւ իր համար մի համբերատար և ժրաջան վարժապետ: Դա մի խաղաղ ընկճաւած ջահել տղայ էր՝ Շիլ-Իգնաշկա անունով: Նա ինքն էլ շատ սիրում էր զիրք ու զրագիտութիւն և սիրով բաժանում էր իր զիտցածն ուսման ու լոյսի կարօտ Գաւրիլի հետ: Ծերունին և պատանին ծածուկ հաւաքւում էին և ջանասիրութեամբ կարդում: Վատ էր լինում նրանց համար, երբ Ուլիանա տատը զըտնում էր նրանց կարդալիս... Բռնկում էր ամպլոպը, և ամպը գոռում երկար, անդադար...

Դ.

1002  
6932

Զ զիւղի փողոցի մէջ տեղը մի հասարակաց ջրհոր կար: Գիւղացիք անւանում էին նրան աղրիլը: Այդ հորի ջուրը շատ պատական էր, և այսուեղ ամբողջ օրերով գալիս էին ջուր տանելու: Կանայք առանձնապէս սիրում էին աղրիւրը գալ: Այդտեղ նրանք չարախօսում էին սրան-նրան, բամբասում, գանդատւում իրանց գործերի մասին, հազորդում էին միմեանց նորութիւններ, պարծենում նոր հանդերձներով, բաժանում և ուրախութիւն և վիշտ: Աղրիւրի մօտ իմացւում էին զիւղական բոլոր գործերը, աղրիւրի մօտ երբեմն տեղի էին ունենում զիւղացոց մէջ վէճների քննութիւնները:

Մի անգամ ձմեռը, մի պայծառ և ցուրտ օր,  
ջրհորի մօտ հաւաքւեցին մի խումբ կնանիք։ Այդտեղ  
կային երկու ուրախ, գեռահաս շատախօսներ՝ վարին-  
կան ու կատինկան, մի անապաւէն պառաւ կին։ Ա-  
ֆիմիան, զինւորի այրի Դարեան և ուրիշները։ Երբ  
ջրհորին մօտեցաւ պառաւ Ուլիանան դոյլերն ուսերին,  
բարձրածայն խօսակցութիւնը, կասես թէ յանկարծ,  
կորեց և ամենքը լոեցին։ Միայն ջանել վարինկան  
քրքչաց։

—Ի՞նչ ես ծիծաղում։ Երեխ սկսուրդ քիչ է շըշ-  
պոել, —պարկը բաց արաւ նրա վրայ Ուլիանան։

—Քո գառն աշխատութեան վրայ եմ ծիծաղում,  
Ուլիանա տատի, —վիրաւորական ձեռվ պատասխանեց  
յանդուզն ջանել վարինկան։

—Իմ վրայ, աղաւնեակ, աւելորդ է ծիծաղել...  
վրաս նաշխեր չըկան նկարւած։ Դեռ ևս շատ ջանէլ ես՝  
ուրիշների վրայ խնդալու համար... ճանաչիր քեզ, քեզ  
այնպէս պահիր, որ վրադ չըծիծաղեն։

—Երբ խնդալու բան կայ, տատիկ, ծիծաղելը  
մեղք չէ։ Լսել ենք, որ քո ծերունին կատարեալ գրա-  
գէտ է դարձել, —մէջ ընկաւ ու յօնքիրով, չադ, կար-  
մրաթշիկ, արբեշումի պղուփը զլիսին ջանէլ կատին-  
կան։

—Քո գործը չէ, աղաւնեակս, պառաւ մարդկանց  
վրայ ծիծաղելը։ Իմ ալեորը ձեզանից հարցնելու չէ  
ելել և ձեր պատւին երբէք չէ զիսկել... Գրագէտ է դա-  
ռել իր յիմարութեան երեսից։ Դու էր պակաս, որ  
մնաց վրայ ծիծաղես։

Ջանելը կուա Ուլիանայի ամենացաւը տեղին։  
Պառաւը բարկութեամբ շրիկացրեց դոյլերը գետնին և  
սկսեց իջեցնել վեցթելեան թուկը ջրհորի մէջ։ Կնանիքը  
դոյլերը ուսերին գրած գնացին փողոցն ի վեր։ Երկու

ջանելները բարձր խօսակցում էին՝ ընդհատելով մէկը  
միւսին և ուրախ-ուրախ ծիծաղում։

Ուլիանային մօտեցաւ Աֆիմիան և, կռանալով  
ականջին, փսփսաց խորհրդաւոր կերպով։

—Լսիր, Ուլիանա ջան, ախր քեզ վրայ ցաւե-  
լուց եմ ասում... ի՞նչ պէտք է կանանց դատավճիռ-  
ները լսել... Ես այնպէս ՚ի գէպ. նրանք քո ծերունուն  
այստեղ բամբասում էին։

—Ի՞նչ է արել նրանց իմ ծերունին... Կարծեմ,  
ոչոքի չի թալանել, չի վիրաւորել, —ասաց սուր կեր-  
պով Ուլիանան՝ լցնելով դոյլերը։

—Լսիր, Ուլիանա ջան, ի՞նչ են ասում մարդիկ  
նրա մասին։ —Տեսել են նրան քաղաքում, բազարում,  
լրագիրները ձեռքին... իսկ յետոյ տեսել են կայարանում։

—Հը, ի՞նչ կայ որ... Քաղաքում նա չորացրած  
սոկոն է վաճառելիս եղել... ել ի՞նչ կայ որ... Ո՞ւմն է  
նա խանդարել այստեղ։

Ուլիանան ինքը հետաքրքրում էր և պատաս-  
խանի սպասում։ Իսկ անապաւէն Աֆիմիան՝ որ նրան  
լաւ ուսումնաբիրել էր, լուս էր և գլուխը կախած  
տարուրերում էր։

—Ել ի՞նչ էր անում իմ ծերունին կայարանում, —  
արդէն մեղմացած, առանց կրքի հարցրեց Ուլիանան։

—Մէկ էլ... Որպէս երկաթուղի՝ գնում է, իսկ ե-  
րեխաները վազում են նրա ետեից ու պոռում...»

—Հապա իմ ծերունին ի՞նչ է անում, —անհամբեր,  
կամաց-կամաց բարկանալով, հարցրեց Ուլիանան։

—Երեխաները, պատանիները, բոլորը կանչում են,  
խնդրում են լրագիրներ... Եւ շատ են շպրտում նրանց  
համար երկաթուղուց... —շարունակեց Աֆիմիան։

—Իսկ իմ ծերունին, —այնպէս անեղ կերպով

հարցը եց Ուլիանան, որ նրա ուսերին դոդողացին ջրով լիքը դոյլերը:

—Ասում են՝ քո ծերունին էլ միևնույնն է անում: Տեսել են նրան... Տղոց հետ ընկնելը, ընկերանալը ամօթ է... Հինգ որ ճանապարհից մի քիչ դէն է զնում՝ կանչում է. «Լրագիր տուէք»: Նրան էլ են շպրտում երկաթուղուց...—ասաց, յուղելով, Աֆիմիան:

Ուլիանա տատը յանկարծ սարսափելի բարկացաւ, նա ամբողջովին դողաց, և նրա աչքերը բարկութիւնից շողողացին:

—Առա են ասում... Սարքում են... Զեմ հաւատում ես,—պոռաց նա:—Նա չի զնուլ այդպիսի բանի: Իր ձեռքը չի մեկնիլ որպէս մուրացկան... Կրքից կուրացած են խօսում... Իսկ դռւ քաւթառ կանանց բամբասանքներին ականջ ես զնում... Քեզ հետ խօսել անգամ չեմ ուզում:

Ուլիանան կատաղած՝ դոյլերը չըխկացրեց մի. միանց ու շարունակեց իր ճանապարհը: Իսկ Աֆիմիան մնաց հորի մօտ՝ ջուր հանելու և ճերմկած զլուխը տարուրերելով ասաց.

—Ո՞հ, ինչպիսի բնաւորութեան պառաւ է... Մի խօսք անգամ չի լինում ասել նրան... Պատրաստ է իւրաքանչիւրին կուլ տալու... Նրա ծերունին խելացի, մարդ չէ:

Այդ օրը Ուլիանայի խելքը զլիին չէր. նա քրրքրում էր իւրայիններին, բարկանում էր, պոռում էր թէ թոռնիկների և թէ հարսի վրայ, իրար էր զարկում գործիքներն ու պտուկները: Եւ անհամբեր սպասում էր իր ծերունի Գաւթիլին՝ զիմաւորելու իր ուզածին ալէս: Յայտնի չէ, թէ ինչու նրան թւում էր զարհուրելի, անհաւատալի, որ իր ծերունին կանգնել է ձեռքը պարզած իրան համար խիստ ատելի լրազրի համար,

ծերունի Գաւթիլը վերադարձաւ քաղաքից տուն արդէն երեկոյեան դէմ, մրսած, ձեան տակ կորած: Հազիւ էր իրան զցել խրճիթը, ետկից մտցնելով ցըրտի մի մեծ քուլայ, որ պառաւը ամբողջովին զինւած, յարձակեց նրա վրայ.

—Ի՞նչպէս են քո անամօթ աչքերը նայում լոյսին: Զէոր տեսել են քեզ կայարանում մարդկանց հետ: Ի՞նչպէս ոտքերդ հասցրին քեզ այստեղ: Ի՞նչպէս դու մտար այստեղ:

—Ի՞նչ կայ որ: Ի՞նչ բգէզ է մտել կրկին ուղեղիդ, —հարցը մեղմ կերպով ծերունին՝ բանալով երկայն գոտին:

—Ո՞չ, առակ չէ... այլ մարդիկ տեսել են... Եւ իմ աչքերը ծակում են... Ամօթ քեզ, մեղաղբում են, ծաղրում են, —պոռաց Ուլիանան՝ աւելի ու աւելի կատաղելով:

—Ի՞նչ են տեսել մարդիկ: Ի՞նչ է, գողութիւն եմ արել, կամ հարբել եմ, կամ գժութիւն արել:

—Մարդիկ ամեն բան տեսել են... Բոլորը զիւտեն... Մարդկանցից չես կարող ծածկւել, —պսսում էր Ուլիանան:—Տեսել են, ինչպէս դռւ մուրացկանի նման՝ կայարանում կանգնած լրագիր ես խնդրել... Տեսել են... Այս, ու... ու... ու... Ալևոր զրագէտ: Զես էլ ամաչում՝: Փոխանակ տանը գործ անելու... սա լրագիր ների համար... կայարան է զնում...

—Ահա և ինիկ—ասաց ծերունին՝ զլուխը տարուրեկելով:—Մարդը եկել է մրսած, սպած, 30 վերստ հեռաւորութիւնից, մի կտոր հաց տար ուտելու... Դեռ սա քրքրում է մեզ:

Գաւթիլը վերցրեց իր քուրքը և բարձրացաւ վառարանի վրայ, որտեղից նայում էին վախեցած թոռնիկների դէմքերը:

Իսկ Ուլիանա տատը նորից կշտամբելով, անիծելով շբխշրիւկացնում էր զդալներն ու թասերը և

սեղան պատրաստում։ Վերջապէս ահեղ ձայնով նա կանչեց։

—Ընթրելու եկէք։

Երբ մի շաբթից յետոյ Գաւրիլը պատրաստում էր քաղաք տանելու մի քիչ վարսակ և չորացրած սոկոն՝ վաճառելու համար, Ուլիանան նրա հետ քաղցր խօսեց։

—Ծերուկ, լսիր ինձ, ժողովորդին քեզ վրայ մի խօսացրու և մեղ էլ ամօթահար մի անիլ։ Զըմտածես էլի լրագիրներ մուրալու։

—Ահա թէ ինչ մտածեց էլի... ինչքո՞ս է պէտք ախր լրագիրը կարդալ չըգիտեմ, գլանակ չեմ ծիռում։

—Կարդալ չըգիտես, բայց էլի միշտ լրագիր վրայ ես նայում... Բոլոր տղերքը վրադ ծիծաղում են...։

—Ուղեցի սովորել, ճիշտ է, բայց որ երկապահ կութիւններ ու կրիւներ ես սարքում...։

—Միթէ ծերունիները գիր էին սովորում... Ո՞րտեղ տեսնւած բան է... Միայն ամօթահար... Ախր մարդու լայեղ բան է... Իսկ տան գործերը երեսի վրայ մնում են։

—Հէնց ես ինքս Անդրիւշայի ու Դմիտրիի մասին կարդացի և ամեն բան իմացայ։

—Քո գործը չէ։ Առանց քեզ էլ բարի մարդիկ կը կարդան և ամեն բան կը պատմեն։

—Սիրտս չի համբերում... Ցանկանում եմ ամեն բան իմանալ... Ուղղակի հողիս ցաւում է, շարունակ տանջւում...։

Ուլիանա տատը նորից բարկացաւ և պոռաց նշիր ձայնով։

—Դէ որ այդպէս է, անզործ ծերունի, եթէ դու գնացել ես էլի կայարան՝ լրագիրներ ինզրելու՝ ես քեզ միանգամմից կուտեմ... Դու կարծում ես թէ ես քո տեղ միշտ պիտի աշխատեմ՝ և՛ ջուր կրիմ, և՛ վայտ ըե-

րեմ... Իսկ սա՞ աղայի պէս՝ լրագիր կարդայ... Ել չըլինի այդպիսի բան, չըլինի և չըլինի՝։

Իսկ ծերունին շուտով դուրս եկաւ խրճիթից և գլուխը տարուքերելով վնաթվնթաց։

—Կնիկ է հա։ Ահա քեզ կնիկ։

Երբ գնացքը անցնում էր կայարանի մօտից, երիտասարդների մի խումբ՝ նայելով վագօնի լուսամուտից՝ նկատեց ծերունուն, որը երկնցնելով ձեռքը կանչում էր. «Տւէք լրագիր... Լրագիր... Լրագիր»...։

Լուսամուտից ցած թռան լրագիրներ. Եւ երիտասարդ անցորդներն ուրախ-ուրախ բարեկում էին, զլխով անում. «Ահա քեզ, պապիկ-ջան, մտանոր հաց։ Կերակրւիր նրանով...»։



Ե.

**Անցաւ մի ամբողջ**  
տարի: Դա մի ծանր, պա-  
տերազմի վերջին տարին  
էր. ժողովրդական յուղում-  
ների, առաջին Պետական  
Դումայի հրատէրի, ժողովի  
և ամեն տեսակ յոյսերի ու  
ակնկալութիւնների ժամա-  
նակը:

Ծանր էր կեանքը գիւ-  
ղերում. պատերազմից յե-  
տոյ շատերը դեռ ևս չէին  
արժանացել իրանց միակ աշ-  
խատաւորների տեսութեա-  
նը: Զասլուխովիէ գիւղում,  
Անտիպովսերի ընտանիքում  
չըգիտէն՝ հոգինանգիստ  
թէ մաղթանք կատարեն ի-  
րանց որդու և փեսայի հա-  
մար. Գաւրիլն ու Ուլիա-  
նան չէին կարողանում մի  
բան հասկանալ՝ ողջ են թէ ոչ իրանց որդին ու փե-  
սան: Մէկ ասում էին, որ սպանւած են, մէկ իրը թէ  
ողջ են, մէկ իրը թէ վերադառնում են: Կեանքը գիւ-  
ղում առաջւայ պէս էր ընթանում: Առաջւայ նման ա-  
մենքը գիմում էին տպագրական խօսքին, ամենքին



յուղում էր ամենափոքը լուրն անգամ: Ուլիանան ա-  
ռաջւայ նման հետամուտ էր լինում իր ծերունուն լրա-  
գըրների առիթով, բռնում էր նրան կամ աշխարհ տե-  
սած մարդու՝ իգնատիի հետ, կամ Շիլ-Իգնաշկայի, կամ  
ուրիշ աղոց հետ, և քրքրում էր նրան, միսն ուտում,  
համարելով որ ծեր մարդու համար կարդալ սովորելը  
ամօթանք է և խայտառակութիւն, երբ փայտը կտըր-  
տւած չէ, ջուր չէ բերւած և ցանկապատը քանդւել է:

Անանը մի երեկոյ պառաւ Ուլիանան ջրում էր  
բանջարանոցը: Տների ետևի ճանապարհով, երեկի քա-  
ղաքից վերադառնալիս, անցնում էր երկու սայլ: Մի  
սայլի վրայ նստած էր տարիքն առած մի գիւղացի՝  
լայն շէկ մօրութով: Հաւասարւելով Ուլիանայի բանջա-  
րանոցին՝ գիւղացին կանգնեցրեց ձին և կանչեց պա-  
ռաւին:

—Ուլիանա, այ Ուլիանա, մի այս կողմն արի:

Պառաւը սրբեց գոգնոցով իր հողոտ ձեռքերը և  
մօտեցաւ ցանկապատին: Մի տարւայ քաշած տան-  
ջանքների, ցաւերի ու գարդերի ազդեցութեան տակ՝  
նա աւելի ևս չորացել ու կորացել էր, սակայն շար-  
ժումները առաջւայ պէս կենդանի և ժիր էին, աչքերը  
առաջւայ նման լի հոգսերով ու մտածումներով:

—Ի՞նչ տեսած լինեմ այսօր, Ուլիանա... Քո ծե-  
րունին կարդալ է սովորել: Քեզ ուղիղն եմ ասում: Նա  
բազարում լրագիր էր կարդում: Ասուած է վկայ... իսկ  
նրա շուրջը ժողովուրդը խմբւած լսում էր...

—Լաւ չէ, Սիմէօն Պետրովիչ, մեզ ծաղրելը... Առանց  
այն էլ սիրտս մաշւած չէ: Դու ծանրաբարոյ մարդ ես,  
իսկ այդ տեսակ կատակներ ես անում:

—Ես կատակ չեմ անում, Ուլիանա: Ում ուզում  
ես՝ հարցընու: Եւ նոյնիսկ մեր գիւղացիք տեսել են մի  
գենետան մէջ լրագիր կարդալիս: Եւ դրա համար ժո-

դովուրդը նրան փող էր տալիս... Բոլորը չէին հաւատում, զարմանում էին...

Ուլիանա տառը կատաղեց:

—Դու կատակ ես անում, Սիմէօն Պետրովիչ։ Իմ ծերունին ծնւած օրւանից գինեառն մտած չէ։ Ասենք զրա համար զումար էլ չունի։

—Ծիծաղելի պառաւ ես դու։ Առաջ չէր գնում, իսկ հիմա ընթերցանութեան համար փող են վճարում... Գինեառն չի գնում խմելու, հարբելու համար։

—Կարդալ էլ չըգիտէ նա... Առւտ ես ասում դու։ Երեխանների հետ միմոսութիւններ էր անում... Ախր ծերունին կարող է կարդալ սովորել... Դատմրկ բան է... Հէնց այնպէս զուր տեղը լրագիրը...

—Ահա քեզ դատարկ... Սովորել է կարդում է... Որքան էլ դու նրան կշտամբէիր, անիծէիր՝ նա էլի իրն էր շարունակում և կարդալ սովորել է։ Մինչ անգամ մեր գիւղացիք զարմացել են։ Գուցէ նա մեր գիւղում էլ կարդար, Եթէ քեզանից չըվախնար։ Գիւղացին մտրակեց ձիուն և սայլը շարժւեց։

—Կուզեռ՝ հաւատա, կուզեռ՝ մի հաւատա... Միքան, որ զա հրաշք է, և ես ինքս իմ աչքերով տեսայ։

Ուլիանա տառն այնպէս էլ կանգնած մնաց ցանկապատի մօտ՝ ինչպէս մեխւած։ Նա կորցրեց իրան և մտածում էր՝ ինչ անէր հիմա իր տղամարդուն և ինչպէս վարւէր մի մարդու հետ, որն արդէն զուրս է եկել հսազանդութիւնից։

Երբ նրա ծերունին շուտով երևաց հեռուից փողոցում, Ուլիանա տառը դաժան զիրք ընդունեց։ Բայց ծերունին զալիս էր արագ՝ ձեռքով շարժումներ անհլով. մի ձեռքում բռնած մի կապոց դառնան մորթիներ,

իսկ միւսում՝ մի ծրաբ ու թղթի մէջ։ Գաւրիլն արտասովոր պայծառ դէմք ունէր։

—Եդ ի՞նչ ես անում, Գաւրիլ, հիմա էլ զինեաններն ես չափչփռմ, —յարձակեց ծերունու վրայ Ուլիանան՝ զուրս պրծնելով բանջարանոցից։

Բայց այս անդամ Գաւրիլը չըվախեցաւ իր պառաւից։

—Մի լսիր, պառաւս... ես ինքս նրա՝ Անդրիւշայի մասին կարդացի... Պառաւը ընդհատեց։

—Առւտ է ինչ ես այնտեղ կարդացել... Երբ դու կարդալ էլ չըգիտես, —արդէն ինչ-որ ընկճւած ձայնով ասաց Ուլիանան։

—Գինանք շուտով խըճիթ... Բոլորը կիմանաս։ Ծերունին շտապեց։

—Է՛յ, Աննուշկա, հարս... մանկիկներ, եկէք այստեղ։ Այստեղ ըոլորը գուած է։ Այսպէս էլ ասւած է. «Անդէյ Գաւրիլով Սվիստունով, զինոր Զարայսկի զնովի»։

—Դէհ, կարդա, կարդա շուտով, —ասաց Ուլիանան, կանչելով։ Գաւրիլի ձեռքերը դողում էին, երբ նա բաց էր անում լրազիրը։ Նա սկսեց կարդալ գանգաղ, կանգ առնելով ուշազրութիւն զարձնելով տառերի վրայ։ Բայց և այնպէս նա կարդում էր պարզ, այնպէս որ բոլորը կարելի էր հսկանալ։

Ահա թէ ինչ կարդաց նա.

«Այսօր զարայցիները՝ յարձակում զործելով, հանդիպեցին զաօլեանի<sup>\*)</sup> մի անծայր դաշտի։ Երբ

<sup>\*)</sup> Գաօլեանը բոյս է, առաջին հայեացքից շատ նմանող սիմինդրի։ Համնում է երբեմն 2 սաժէն բարձրութեան։ Բանում է Մանջուրիայում, Չինաստանում և Կորէայում։

առաջին շարքերն ընթացան այդ բոյսերի երկայնութեամբ, որոնց մէջ այժմ թագնուում են մինչև անգամ ձիւորները, այսպէս որ յուրանների արանքից երեւում են միայն մեր կազակներին իդակները, զարայցիների դէմ կրակ է բանում դարան մտած զօրամասը: Ըմբռնելով նրա ուղղութիւնը, երկրորդ վաշտի զինուոր Անդրէյ Գաւրիլով Սվիստունովը միքանի ընկերների հետ, անցնում է դարանը և, չընայելով որ ճապօնացիները երեք անգամ աւելի էին, անվախ կերպով յարձակուց թշնամու վրայ: Կոփուը գաօլեանում կարձատել էր: Անակնկալ պաշարւած թշնամին՝ կորցնելով մեծ թւով իւրայիններից, փախաւ: Սվիստունովը էլ իւրայիններով հետամուտ եղաւ նրանց այնպէս, որ դուրս եկաւ մեր զլիսաւոր գրոհ տւող զօրամասերի մօտ: Երեկոյեան սպարապետը՝ շնորհաւորելով ջոկատին՝ առաջ կանչեց հերոս զինուորին և պարզեց նրան քաջագործութեան համար զինուորական Գէորգի շքանշը:

Ուլիանա տատը և Աննուշկան լաց էին լինում ու երեսներին շարունակ խաչ անում:

—Կենդանի է, կենդանի է Անդրէյշան,—ուրախութիւնից իրան կորցրած պնդում էր Ուլիանան:

Շուտով Գաւրիլի խրճիթը ծայրից ծայր լցւեց ժողովուրդով: Ծերունին կրկին և կրկին ստիպւած էր կարդալ և Անդրէյի, և Իւանի, և Կուզմա Իգնատեվի մասին...

—Տէր իմ, և ինչպէս դու, պապի ջան, կարդալ սովորեցիր,—զարմանում էին պառաւներն ու երիտասարդները՝ շրջապատելով ծերունուն:


—Այս... Արդէն մեղանչել եմ... մեղանչել եմ պառաւիս դէմ... Բոլորը նրանից ծածուկ, կամացուկ... Բարկանում էր նա շատ... ես ինքս զարմանում եմ՝


ինչպէս յաղթեցի գրին... Բոլոր ժամանակ կուզէի իմանալ որդուս՝ Անդրէյի մասին: Սիրաս չէր համբերում... Հիմա, երբ կարդում եմ, թեթև է: Քիչ առաջ մինչև անգամ կարդալուս համար փող վաստակեցի, երեխանների համար գառան մորթիներ առի, իսկ անեցոց համար՝ տառեխ:

Ծերունին պատմում էր ու շարունակ երկիրով նայում իր պառաւի վրայ:

Սակայն Ուլիանան զինւել էր լրութիւնով, չէր բարկանում ու չէր կշտամբում, միայն մտազրադ ժողովում էր ինչոր խրճիթում:

Այն ժամանակից յետոյ, ասում են, ծերունի Գաւրիլին միշտ ստիպում են կարդալ գիրք կամ լրագիր: Իսկ բազարում հետաքրքրողները մինչև անգամ վճարում են իրենց վաստակած զրօնները: Ծերունին սիրով է կարդում, առանց դէմ առնելու, դանդաղ, բայց հասկանալի, ինքն է ճարում լրագիրներ: Միայն ծեռագիր չէր կարողանում կարդալ և ի ցաւ գիւղացիների անկարող է զրել և կարդալ նամակներ:





Դպրոցական աշակերտուհիների և աշա-  
կերտների համար տարեկան մէկ ըուբ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0386671

11.591

ՏԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Ե  
ներկայ 1909 թ. բաժանորդագրութիւնը  
 ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԳ ՏԻ ՏԱՐԱԳ

ՊԱՏԿՐԱՋԱՐԴ ՀԱՇՖԵՍՆԵՐԻ

Պրէմիաներն են՝ 1) ՎեչեՓըթ ԽԶՄԻՔԵԸՆ, մեծաղիք 18  
 գոյնով պատկեր, 2) ԳԵՎԼԱՓՆՁԲԿ, 3) Ա.Ի.Պ.Վ.Ա.Պ.Ա.Հ.  
 Ա.Պ.Ա.Ի.Կ ԿԱՐ ՄԱՍ-ՄԱՍ գծարելոր ՊԱՅՄԱՆՈՎ, ԲԱԺԱՆՈՐ-  
 ԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԵ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ:

Լոյս տեսնող Ն. Ն.-ի քանակն ու ծաւալը կախումն ունեն  
 վճարող բաժանորդների քանակից:

Պրէմիաներն ու յանելածներն ենթարկվում են փոփոխութեան:

Աշխատակցում են մեր և եւրոպական անւանի մա-  
 տենագիրներ, բանաստեղծներ, գեղագէտներ, արւեստա-  
 գէտներ, մանկավարժներ, հրապարակախօսներ, լրագրող-  
 ներ: Պատկերների կիշէները պատրաստում են բացա-  
 ռապէս եւրոպայի նշանաւոր գործարաններում: Տպագրը-  
 ւում են ընտիր թղթի վրայ, իլիւստրացիօնի մրով, նոր  
 տառերով և իրանց թանկագին պրէմիաներով ու յաւել-  
 ւածներով հրապարակի վրայ չունեն մրցակից:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ** ԱՂԲԻՒՐ 3 թ. (արտասահման  
 5 թ.) ՏԱՐԱԳ 6 թ. (արտասահման 10 թ.), Աղբիւր-Տարագ  
 պրէմիաներով, յաւելւածներով 10 թ. (արտասահման 18 թ.):

Հասցէն՝ Tiflis, Ռедакցիա „Ա Գ Բ Յ Ո Ր“ կամ „Տ Ա Ր Ա Յ“  
 Tiflis, (Caucase) „Ա Գ Ի Վ Ո Ր“ կամ „Տ Ա Ր Ա Յ“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԴՐԱՆ Դ

891.71
Ճ - 90